ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մ-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Մ. Մկոյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Հ. Կակոյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված (03.03.2021թ.

վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մ-Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 02.03.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ:

Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20 ծածկագրով ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովի 26.01.2021թ-ի N 2 արձանագրության համաձայն բողոքաբերի հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության համաձայն որոշվել է 01.02.2021թ-ին հրավիրել առաջարկված գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակացությունների:

Գնահատող հանձնաժողովի 01.02.2021թ-ի N 2.1 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում նվազագույն գին է առաջարկել Բողոքաբերը:

Բողոքաբերի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Գնահատող հանձնաժողովի 10.02.2021թ-ի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է մինչև 18.02.2021թ-ը՝ Բողոքաբերի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերն ուսումնասիրելու համար:

Գնահատող հանձնաժողովը 18.02.2021թ-ի N 2.3 արձանագրությամբ, հիմք ընդունելով գլխավոր տնօրենի առաջին տեղակալի մոտ անցկացված տեխնիկական խորհրդակցության, գլխավոր տնօրենի մոտ անցկացված խորհրդակցության արձանագրությունները, ինչպես նաև ՀՀ ՏԵԿ փոխնախարար Հ. Վարդանյանի գրությունը, որոշել է վերը նշված փաստաթղթերով ստացված հանձնարարականներն ի կատար ածելու թույլտվություն ստանալու նպատակով դիմել ՀՀ ՏԵԿ նախարարին և այդ հիմքով կասեցնել նիստը:

Գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ-ի N 2.4 արձանագրությամբ ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

2.ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ:

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ-ի N 2.4 արձանագրությունը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներից և ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքարկվող որոշման որպես իրավական հիմնավորում գնահատող հանձնաժողովը նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և Կարգի 58-րդ կետը, իսկ որպես փաստացի հիմք ՀՀ ՏԵԿ նախարարի 19.02.2021թ-ի N 198 հրամանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե. դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝.....Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Վերը նշված իրավական ակտերի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդիրը հստակ սահմանել է կոնկրետ դեպքեր, որոնց առկայության պայմաններում գնահատող հանձնաժողովը կարող է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած: Նշված դեպքերից է գնման պահանջի վերացումը կամ դադարումը: Հաշվի առնելով սույն ընթացակարգի առաձնահատկությունը և գնման առարկան՝ նշեմ, որ դրա գնման պահանջը չի կարող վերանալ, քանի որ խոսքը վերաբերում է տուբոգեներատորի արդիականացման աշխատանքներին:

Բացի այդ, եթե ուսումնասիրենք սույն ընթացակարգի հրավերը, ապա կտեսնենք, որ պատվիրատուն բավականին մեծ քանակությամբ սարք-սարքավորումներ է ձեռքբերել,

որոնք բացառապես պետք է օգտագործվեն տուրբոգեներատորի արդիականցման համար:

Բողոքարկվող որոշմամբ գնահատող հանձնաժողովը որևէ կերպ չի պատճառաբանել թե ինչպիսի հանգամանքների առկայության պայմանների վրա հասնելու հետևանքով է վերացել գնման պահանջը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերը նշված դրույթներով ամրագրվում է իրավական պետության իշխանության թույլատրելի շրջանակի բովանդակությունն առ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու անձինք իրավասու են կատարել միայն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ, հետևաբար՝ այդ լիազորությունները (գործառույթները, իրավունքները և պարտականությունները) չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերին, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում վերը նշված մարմիններն ու անձիք իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կաշկանդված են իրավունքով և օրենքով, ինչը դրսևորվում է օրենքի գերակայությամբ՝ հետևաբար ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում Բողոքաբերը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու

օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին:

3.*ԲՈՂՈՔԱԲԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ:*

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ բողոքը բավարարել, այն է՝ պարտավորեցնել ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20 ծածկագրով գնահատող հանձնաժողովին ընդունել 23.02.2021թ.-ի N 2.4 արձանագրությունը դադարեցնելու մասին որոշում»:

Ի պատասխան «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված 05.03.2021թ. թիվ Մ-9262-2021 գրության՝ Ընկերությունը 11.03.2021թ. ներկայացված առարկությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ գտնում եմ, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Պատվիրատուն նշում է, որ բողոքարկվող որոշման կայացման համար հիմք են հանդիսացել ՏԱ պետ Ա. Զեյնալյանի զեկուցագիրը, 02.02.2021թ-ի թիվ 002/1, 03.02.2021թ-ի թիվ 001/2-007 արձանագրությունները, ինչպես նաև ՀՀ ՏԿԵ նախարարի 19.02.2021թ-ի թիվ 198-Ա հրամանը:

Վերը նշված արձանագրությունների ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ Պատվիրատուն արձանագրում է, որ ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20 ծածկագրով ընթացակարգով նախատեսված աշխատանքները կարելի է իրականացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների միջոցով:

Ցանկանում եմ մեկ անգամ Ձեր ուշադրությունը հրավիրել արձանագրության իրավական հիմքին: Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը բողոքարկվող արձանագրության իրավական հիմք նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և Կարգի 58-րդ կետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե.... դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝.... Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել

համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Վերը նշված իրավական ակտերի տառացի մեկնաբանության և վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ թե՝ օրենսդիրը, թե՝ գործադիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար սահմանել են կոնկրետ նախապայման, այն է՝ եթե..... դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Գնման պահանջը դա այն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունն է, որն անհրաժեշտ է պատվիրատուի կարիքների համար, իսկ գնման պահաջի դադարումն այն է, երբ կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունը վերացել է պատվիրատուի համար:

Տվյալ դեպքում պատվիրատուն ոչ միայն չի հիմնավորում այն հանգամանքը, որ սույն ընթացակարգով նախատեսված աշխատանքի ձեռքբերման անհրաժեշտությունը դադարել է, այլև իր իսկ կողմից ներկայացված արձանագրություններով փաստում է, որ դա իրեն անհարաժեշտ է և վերջինս պատրաստվում է այն իրականացնել իր աշխատակիցների միջոցով:

Անդրադառնալով նախարարի հրամանին՝ նշեմ, որ դրա ուսումնասիրությունից հստակ երևում է, որ այն հիմնված է զուտ ՏԱ պետ Ա. Զեյնալյանի զեկուցագրի, 02.02.2021թ.-ի թիվ 002/1, 03.02.2021թ.-ի թիվ 001/2-007 արձանագրությունների վրա, որոնք, ինչպես արդեն նշել եմ չեն հիմնավորում գնման պահանջի դադարման փաստը»:

Ընկերությունը 18.03.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ՝ նիստը հետաձգելու մասին, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոքը: Նշված բողոքի վերաբերյալ որոշման հրապարակման օր է նշանակված 19.03.2021թ.-ը:

Բողոքաբերի կողմից լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ ներկայացնելու համար խնդրում եմ հետաձգել որոշման հրապարակման նիստը՝ բողոքաբերին հնարավորություն ընձեռելով ներկայացնել լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում

և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ 19.03.2021թ.-ին որոշման հրապարկման նպատակով նշանակված նիստը հետաձգել և բողոքի վերաբերյալ որոշումը կայացնել մեկ նիստ անցկացնելուց հետո, որի արդյունքում կապահովվի նաև Բողոքաբերի լսված լինելու իրավունքը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.03.2021թ. ժամը 09:50-ին և 19.03.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը, միաժամանակ 19.03.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Գնման պահանջը ծագելուց հետո ըստ օրենքի այն ներառվել է Պատվիրատուի գնումների պլանում և պատասխանատու ստորաբաժանումը, որի մոտ ծագել է գնման պահանջը որպես նախահաշվային արժեք գնումների պլանում տվյալ աշխատանքների ձեռքբերման համար նախատեսել է մոտ 10 միլիոն ԱՄՆ դոլար: Սակայն դրանից հետո թիվ 001/2-007 արձանագրությամբ նույն պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը նշում է, որ նշված աշխատանքները հնարավոր է իրականացնել սեփական ուժերով առանց կապալառու կազմակերպության ներգրավման, իսկ աշխատանքի համար նախատեսված արժեքը՝ կազմում է մոտ 100 միլիոն դրամ: Հարց է առաջանում նշված ահռելի գումարային տարբերությունը ինչով է բացատրում պատվիրատուն, եթե մինչ այդ արդեն նախատեսված է նշված չափի գումար և ստացվում է, որ ինքը հնարավորություն ունի ինքնուրույն կատարելու ինչ-որ չափի աշխատանքներ: Եթե ուներ հնարավորություն կարող էր նախապես օգտագործել այդ հնարավորությունը: Բողոքներ քննող անձի ուշադրությունն եմ հրավիրում սույն բողոքի փաստերի ժամանակագրության վրա սույն գործով գնումների պահանջը ծագել, իսկ գնումների պլանում ներառվել է դեռևս 2020 թվականի դեկտեմբեր ամսին հայտերի բացումից հետո երբ պարզ է դարձել մասնակիցների կազմը և նրանց կողմից ներկայացված գնային առաջարկները, դրանից հետո միայն պատվիրատուն Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքով որոշել է որոշակի գումարներ տնտեսել:

Գնումների մասին գործող օրենսդրությամբ Պատվիրատուին կամ Պատվիրատուներին հնարավորություն է ընձեռնվում գնումների պլանում ներառվող նախահաշվային արժեքը ինքնուրույն որոշելու: Հարց է առաջանում նախահաշվային արժեքը կազմելիս Պատվիրատուն արդյոք չի մտածել գումարների խնայողության մասին և ըստ արձանագրությունով նախատեսված շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ աշխատանքը նախատեսել է ընդամենը 10 միլիոն ԱՄՆ դոլարով»:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.03.2021թ. թիվ Մ-9262-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի շահագործման ժամկետի երկարացման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկի շրջանակներում «Հայկական ԱԷԿ-ի թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման» աշխատանքների ձեռք բերման նպատակով 2020թ. դեկտեմբերի 7-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի ընտրության հիմք են հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ 3-րդ մասի 2- րդ կետը, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը և ՀՀ Կառավարության 526-Ն առ 04.05.2017թ. որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությունը:

Ընթացակարգին՝ ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև բողոքաբեր «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն, որի մասնակցության հայտը գնահատվել է բավարար: ՀՀ Կառավարության 526-Ն առ 04.05.2017թ. որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգի մյուս մասնակիցների հետ հրավիրվել է ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման: Բանակցությունների արդյունքում արձանագրվել է, որ «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույնն է և չի գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափը: Հիմք ընդունելով հրավերի դրույթները՝ «Մ-Գրուպ» ՍՊԸ-

ին առաջարկվել է ներկայացնել հրավերին կցված տեխնիկական առաջադրանքով սահմանված և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողի անվանումը և երաշխիքային ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր սարքի և սարքավորման միավորի արժեքը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով ստորև նշված փաստաթղթերը և իրավական ակտերը.

-պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ՏԱ պետ Ա. Զեյնալյանի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ գխավոր տնօրենի հանձնարարականը,

- «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի առաջին - ՀԱԷԿ-ի տնօրենի մոտ անցկացրած տեխնիկական խորհրդակցության թիվ 002/1-01, առ 02.02.2021թ. արձանագրությունը,

- «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդակցության թիվ 001/2-007, առ 03.02.2021թ. արձանագրությունը,

- ՀՀ ՏԿԵ նախարար Ս. Պապիկյանի, ս/թ փետրվարի 19-ի թիվ 198-Ա հրամանը,

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթները, մասնավորապես՝ 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը,

- ՀՀ Կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) դրույթները, մասնավորապես 14-րդ կետի 6-րդ ենթակետը և 58-րդ կետը (Օրենքի 37-րդ հոդվածի 1- ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա),

- ՀՀ Վարչապետի 2019թ. հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման դրույթները, մասնավորապես՝ 19-րդ կետի 2-րդ ենթակետը (Նախարարը՝ իրականացնում է նախարարությանը ենթակա պետական մարմնի, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպության, հիմնարկի կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ, այդ թվում՝ վերանայում է նախարարությանը ենթակա պետական մարմնի որոշումները), 19-րդ կետի 20-րդ ենթակետը (Նախարարը՝ օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր):

Բողոքաբերի այն հայտարարությանը, որ գնման ընթացակարգի շրջանակներում խախտվել են ՀՀ Սահմանադրության 6-րդ և 59-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը չեն համապատասխանում իրականությանը, որի մասին վկայում են վերը նշված իրավական ակտերը և գնման ընթացակարգի հրավերը: Ավելացնեմ նաև, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից պայմանագիր կնքելու առաջարկ «Մ-Գրուպ» ՍՊԸ-ին չի կատարվել, քանի որ հրավերի տեքստով սահմանված է եղել, որ պայմանագիր կնքելու առաջարկը կկատարվի ներկայացված ապրանքների ամբողջական բնութագրի գնահատումից հետո միայն: Հետևաբար կարող ենք փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բողոքաբերի որևէ իրավունք գնման ընթացակարգի շրջանակներում չի խախտվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն՝ հանձինս գնահատող հանձնաժողովի, գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով, իսկ գնման վերացումը իրականացվել է ՀՀ ՏԿԵ նախարարի հրամանի համաձայն»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.03.2021թ. ժամը 09:50-ին և 19.03.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 19.02.2021թ. գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին 198-Ա հրամանի համաձայն՝ թույլատրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի թիվ 2.4 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի- ՀՀ ՏԿԵ նախարար Ս.Պապիկյանի որոշմամբ (ՀՀ ՏԿԵ-ի նախարարի №198, առ 19.02.2021թ. հրաման), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 14-րդ կետի 6-րդ ենթակետով և 58-րդ կետով, «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի 02.03.2021թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 05.03.2021թ. թիվ Մ-9262-2021 գրությունը՝ կից նյութերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:

Նույն մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 14-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Եվ այսպես, Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մ-Գրուպ» ՍՊԸ-ն:

«ՀԱԷԿ»-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալի մոտ անցկացված տեխնիկական խորհրդակցության 02.02.2021թ. թիվ 002/1-01 և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդակցության 03.02.2021թ. թիվ 001/2-007 արձանագրությունների համաձայն՝ ի կատարումն ՀՀ ՏԿԵ փոխնարար Հ. Վարդանյանի թիվ ՀՎ/27.1/2262-2021 առ 02.02.2021թ. գրության (ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 26-ի N 02/16.10/1766-2021 հանձարարականը՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի միջոցառումների գծով ծախսերի նվազեցման վերաբերյալ)՝ նույն օրը՝ ս/թ. փետրվարի 02-ին, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում հրավիրվել է համապատասխան աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 11-ի թիվ 953-Ն որոշմամբ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի թիվ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրված բյուջետային վարկի շրջանակներում 2020-2022թթ. ցանկով նախատեսված միջոցառումների վերանայման և այն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների ուժերով՝ առանց կապալառու կազմակերպությունների ներգրավման իրականացնելու հնարավորությունը, ինչպես նաև

հարկ եղած դեպքում սեփական միջոցներով կազմակերպելու սարքերի և սարքավորումների ձեռքբերման իրականացումը:

Խորհրդակցության ընթացքում որոշվել է արձանագրություններով նշված ցանկից առանձնացնել այն աշխատանքները, որոնք կապված են փոխարինման, շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների հետ, որոնք հնարավոր է իրականացնել սեփական միջոցներով՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների ներգրավմամբ:

Արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդակցության 03.02.2021թ. թիվ 001/2-007 արձանագրության համաձայն՝ որոշվել է, հաշվի առնելով արձանագրությամբ նշված ցանկի 6-րդ կետով աշխատանքների կատարման հրատապությունը և նպատակ ունենալով իրականացնել պետական բյուջեով նախատեսված ծրագրերի միջոցառումների գծով ծախսերի նվազեցում, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, այն է՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա, դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ առաջարկելով կայացնել որոշում՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ՝ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2021թ. նիստի թիվ 2.3 արձանագրությամբ արձանագրվել է, հետևյալը.

«Առաջնորդվելով պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ՏԱ պետ Ա. Զեյնալյանի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի հանձնարարականով, ինչպես նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ - ՀԱԷԿ-ի տնօրենի մոտ անցկացրած տեխնիկական խորհրդակցության թիվ 002/1-01, առ 02.02.2021թ. արձանագրությամբ և «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդակցության թիվ 001/2-007, առ 03.02.2021թ. արձանագրությամբ, այդ թվում ՀՀ ՏԿԵ փոխնախարար Հ.Վարդանյանի թիվ ՀՎ/27.1/2262-2021 առ 02.02.2021թ. գրությամբ (ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 26-ի № 02/16.10/1766-2021 հանձնարարականը) և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) դրույթները՝ գնահատող

հանձնաժողովը որոշում կայացրեց նիստը կասեցնել և Պատվիրատուի ղեկավարի- «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՏ անունից գրությամբ դիմել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարին՝ ՀՀ ՏԿԵ նախարար Ս. Պապիկյանին, վերը նշված փաստաթղթերով ստացված հանձնարարականները կատարելու թույլտվություն ստանալու նպատակով»:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 19.02.2021թ.՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին 198-Ա հրամանի համաձայն՝ թույլատրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար թիվ 3, 4 տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի արդիականացման սարքավորումների ապամոնտաժման, շինմոնտաժման և թողարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2021թ. նիստի թիվ 2.4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Առաջնորդվելով պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ՏԱ պետ Ա. Զեյնալյանի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի հանձնարարականով, ինչպես նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ - ՀԱԷԿ-ի տնօրենի մոտ անցկացրած տեխնիկական խորհրդակցության թիվ 002/1-01, առ 02.02.2021թ. արձանագրությամբ և «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդակցության թիվ 001/2-007, առ 03.02.2021թ. արձանագրությամբ, այդ թվում ՀՀ ՏԿԵ փոխնախարար Հ.Վարդանյանի թիվ ՀՎ/27.1/2262-2021 առ 02.02.2021թ. գրությամբ (ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 26-ի № 02/16.10/1766-2021 հանձնարարականը) և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) դրույթները՝ գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել նիստը կասեցնել և պատվիրատուի ղեկավարի - «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՏ անունից գրությամբ դիմել «ՀԱԷԿ» ՓԲԸ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարին՝ ՀՀ ՏԿԵ նախարար Ս.Պապիկյանին, վերը նշված փաստաթղթերով ստացված հանձնարարականները կատարելու թույլտվություն ստանալու նպատակով:

Ի պատասխան «ՀԱԷԿ» ՓԲԸ–ի գրությանը՝ ս/թ փետրվարի 22-ին ստացվել է ՀՀ ՏԿԵ-ի նախարարի №198, առ 19.02.2021թ. հրամանը:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի- ՀՀ ՏԿԵ նախարար Ս.Պապիկյանի որոշմամբ (ՀՀ ՏԿԵ-ի նախարարի №198, առ 19.02.2021թ. հրաման), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 14-րդ կետի 6-րդ ենթակետով և 58-րդ կետով, «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարեց չկայացած»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 23.02.2021թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ այն է դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը, չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով գնման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները և Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքերը՝ հայտնում եմ հետևյալը.

Հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև չկայացած հայտարարելու պայմանները:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ ***<u>գնումը պատվիրատուի հատուցմամբ՝</u> ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Նման պայմաններում, ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով ի սկզբանե նախատեսվել են գնման առարկայի այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք հետագայում «ՀԱԷԿ»-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալի մոտ անցկացրած տեխնիկական խորհրդակցության 02.02.2021թ. թիվ 002/1-01 և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդակցության 03.02.2021թ. թիվ 001/2-007 արձանագրությունների համաձայն՝ ի կատարումն ՀՀ ՏԿԵ փոխնարար Հ. Վարդանյանի թիվ ՀՎ/27.1/2262-2021 առ 02.02.2021թ. գրության (ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 26-ի N 02/16.10/1766-2021 հանձարարականը՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի միջոցառումների գծով ծախսերի նվազեցման վերաբերյալ), որոշվել է արձանագրություններով նշված ցանկից առանձնացնել այն աշխատանքները, որոնք կապված են փոխարինման, շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների հետ, որոնք հնարավոր է իրականացնել սեփական միջոցներով՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների ներգրավմամբ, և որի հիմքով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 19.02.2021թ. գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին 198-Ա հրամանի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.02.2021թ. նիստի թիվ 2.4 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին, և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Ընդ որում՝ արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով ի սկզբանե նախատեսված են եղել գնման ենթակա այնպիսի

աշխատանքներ, որոնց գնման պահանջը հետագայում դադարել է, այն հիմքով, որ դրանք հնարավոր է իրականացնել սեփական միջոցներով՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների ներգրավմամբ, այնուամենայնիվ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գնման տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման, պատվիրատուի կարիքին համարժեք լինելու իմպերատիվ պահանջների առկայության պայմաններում «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան գնման առարկայի ձեռքբերումը չի կարող համարվել տնտեսող, արդյունավետ և օգտավետ Պատվիրատուի համար և կհանգեցնի նշված գնման պահանջի համար նախատեսված ֆինանսնական միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը, քանի որ Պատվիրատուն նման տեխնիկական հատկանիշներով առարկայի գնման պահանջ փաստացի արձանագրել է, որ չունի:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ. «*Գնման պահանջը դա այն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունն է, որն անհրաժեշտ է պատվիրատուի կարիքների համար, իսկ գնման պահաջի դադարումն այն է, երբ կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անհրաժեշտությունը վերացել է պատվիրատուի համար: Տվյալ դեպքում պատվիրատուն ոչ միայն չի հիմնավորում այն հանգամանքը, որ սույն ընթացակարգով նախատեսված աշխատանքի ձեռքբերման անհրաժեշտությունը դադարել է, այլև իր իսկ կողմից ներկայացված արձանագրություններով փաստում է, որ դա իրեն անհարաժեշտ է և վերջինս պատրաստվում է այն իրականացնել իր աշխատակիցների միջոցով*», ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ ***<u>գնումը պատվիրատուի հատուցմամբ՝</u> ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով <u>բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:</u>***

Նույն մասի 23-րդ կետի համաձայն՝ ***<u>գնման գործընթացը գնում կատարելու նպատակով</u>*** գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների

պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

<u>1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումները հստակ ցույց են տալիս, որ գնումը պատվիրատուի հատուցմամբ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է: Ընդ որում՝ օրենսդիրը պատվիրատուի համար նախատեսել է իրավունք՝ գնում կատարելու նպատակով հայտարարված գնման գործընթացը, եթե դադարել է գնում իրականացնելու պահանջը, չկայացած հայտարարելու:

Այլ կերպ ասած՝ Պատվիրատուի մոտ դադարել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով ընթացակարգով ձեռք բերվող որոշ աշխատանքները գնում իրականացնելու միջոցով ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Ուստի վերը նշված իրավակարգավորումներից ելնելով՝ գտնում եմ, որ Պատվիրատուն, օգտվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքից և չկայացած հայտարարելով Ընթացակարգը՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-4/20» ծածկագրով ընթացակարգով ձեռքբերվող աշխատանքները՝ գնում իրականացնելու պահանջը դադարելու հիմքով պայմանավորված, գործել է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Կարգի 58-րդ կետով սահմանված պահանջների պահպանմամբ:

Անդրադառնալով ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից 18.03.2021թ. ներկայացված միջնորդությանը՝ 19.03.2021թ. որոշման հրապարկման նպատակով նշանակված նիստը հետաձգելու և մեկ այլ նիստ հրավիրելու վերաբերյալ՝ հնարավորություն տալով Ընկերությանը ներկայացնելու լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ, միաժամանակ 19.03.2021թ. հրավիրված նիստի ընթացքում ներկայացված միջնորդությանը՝ Պատվիրատուի ներկայացուցչի մասնակցությունը ապահովելու վերաբերյալ, ապա սույն մասերով արձանագրում եմ, որ 19.03.2021թ.

կայացած նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերջինիս միջնորդությունները մերժվել են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Եվ այսպես, Ընկերությունը բողոքը ներկայացրել է 02.03.2021թ., որի քննության շրջանակներում 09.03.2021թ. հրավիրվել է նիստ: Նիստի ընթացքում Ընկերությանը տրամադրվել են Պատվիրատուի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ բողոքին առնչվող փաստաթղթերը և բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը:

Նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից տրված հարցադրմանը, այն է՝ արդյոք բողոքաբերն ունի անհրաժեշտություն ծանոթանալու ներկայացված դիրքորոշմանը և փաստաթղթերին, ինչպես նաև ներկայացնելու լրացուցիչ առարկություններ, ի պատասխան բողոքաբերի ներկայացուցիչը խնդրել է տրամադրել 2 օր ժամանակ՝ փաստաթղթերին ծանոթանալու և գրավոր առարկություններ ներկայացնելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 09.03.2021թ. հրավիրված նիստը ավարտվել է և Ընկերությանը տրամադրվել է 3 աշխատանքային օր:

Այնուհետև՝ 11.03.2021թ.-ին, Ընկերության կողմից ներկայացվել է գրավոր առարկություն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով ներկայացված առարկությունը, ինչպես նաև բողոքը, դրանք համադրելով գործով հաստատված փաստերի և կիրառման ենթակա նորմերի հետ, որոշել է ավարտել գործի քննությունը և անցնել որոշման հրապարակման:

Այսպիսով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Ընկերությանն ընձեռնել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բողոքարկման իրավունքի համար անհրաժեշտ երաշխիքները:

Ինչ վերաբերում է Ընկերության լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ միջնորդությանը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝..... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը իրականացնում է բողոքով ներկայացված

ապացույցների հիման վրա, ընդ որում՝ բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմանվորումներ ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում՝ օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու միայն բողոքի հետ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու և/կամ փոփոխելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է թե՛ բողոքը ներկայացնելու, և թե՛ բողոքի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ ևս մեկ նիստ նշանակելու միջնորդությանը, ապա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերջինիս միջնորդությունը մերժվել է՝ հաշվի առնելով, նաև այն փաստական հանգամանքը, որ աշխատանքներն իրականացվում են ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու պայմաններում, որը հայտարարվել է Covid-19 համավարակի արդյունքում, և այս համատեքստում բողոքի քննության շրջանակներում հրավիրվող նիստերը պետք է նվազագույնի հասցվեն՝ հնարավորության դեպքում իրականացվի գրավոր ընթացակարգով, ինչը կնպաստի վարակման և վարակի տարածման ռիսկի նվազեցմանը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի ներկայացուցչի մասնակցությունը նիստին ապահովելու վերաբերյալ Ընկերության միջնորդությանը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերջինիս միջնորդությունը մերժվել է, հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերի համաձայն՝

14. Բողոքի քննությունն իրականացվում է նիստերի միջոցով:

15. Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը....:

16.***Յուրաքանչյուր նիստի անցկացման օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ անձը տեղեկագրում հրապարակում է նիստի օրակարգի, անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվություն պարունակող հայտարարություն: Բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար:***

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 15-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը արդեն իսկ բողոքի քննության նպատակով 09.03.2021թ. ժամը 09:50-ին և 19.03.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերին ապահովել է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ դեպքում բողոքաբերի և Պատվիրատուի՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/09 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Ընդ որում՝ համաձայն նույն կարգի 16-րդ կետի՝ Բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար:

Այլ կերպ ասած՝ բողոքարկման ընթացակարգով հրավիրված նիստերին ներկայանալը պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության միջնորդությամբ ներկայացված 19.03.2021թ.-ին որոշման հրապարկման նպատակով նշանակված նիստը հետաձգելուն և բողոքի վերաբերյալ որոշումը մեկ նիստ անցկացնելուց հետո կայացնելուն, որի արդյունքում կապահովվի նաև Բողոքաբերի լսված լինելու իրավունքը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ 19.03.2021թ. հրավիրված նիստի ընթացքում վերջինիս տրվել է նման հնարավորություն:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից գնումների պլանի, ինչպես նաև աշխատանքների ձեռքբերման նախահաշվային արժեքի մասով 19.03.2021թ. հրավիրված նիստի ընթացքում ներկայացված դիտարկմանը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ ներկայացված դիտարկումը չի հանդիսանում վերաբերելի ապացույց բողոքով վիճարկվող հիմքին, քանի որ Ընթացակարգը չկայացած է հայտարարվել գնման պահանջը դադարելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**